ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի
Վարդանաշեն համայնք, 1-ին փողոց 26 շենք հեռ. 077 07 00 10

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» նոյեմբերի 2015թվականի թիվ 20-Ա

ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով // Տեղական Ինքնակառավարման մասին // Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով.

1. Հաստատել Արմավիրի մարզի Վարդանաշեն գյուղական համայնքի ավագանու 2015թվականի նոյեմբերի 26-ի-ի թիվ 7-րդ արտահերթ նիստի օրակարգը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

Ավետիսյան Մայիս
Գևորգյան Արման
Երիցյան Գոհարիկ
Զաքարյան Սայադ

կողմ (4) **դեմ (0)** **ձեռնպահ (0)**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2015թ. նոյեմբերի 26.
Գ. Վարդանաշեն

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքի
ավագանու .2015 թ. նոյեմբերի 26-ի
թիվ 7 արտահերթ նիստի թիվ 20-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳԸ

1. Վարդանաշեն համայնքի ավագանու 2015թվականի նոյեմբերի 26-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

(Զեկ. Ա. Մանուկյան)

2. Համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 8նիստի թիվ 31-Ն արաշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

(Զեկ. Ա. Մանուկյան)

3. Վարդանաշեն համայնքի 2016թվականի տեղական տուրքերի և վճարների հաստատման մասին:

(Զեկ. Ա. Մանուկյան)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի
Վարդանաշեն համայնք, 1-ին փողոց 26 շենք հեռ. 077 07 00 10

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» նոյեմբերի 2015թվականի թիվ 21-Ն

ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ ԹԻՎ 31-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով // Տեղական Ինքնակառավարման մասին // Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով և « բյուջետային համակարգի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով.

1. Հաստատել Վարդանաշեն համայնքի 2015 թվականի բյուջեում կատարված փոփոխությունները համաձայն հավելվածի

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Ավագանու անդամներ՝

Ավետիսյան Մայիս
Գևորգյան Արման
Երիցյան Գոհարիկ
Զաքարյան Սայադ

կողմ (4) **դեմ (0)** **ձեռնպահ (0)**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2015թ. նոյեմբերի 26.
Գ. Վարդանաշեն

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքի

ավագանու .2015 թ. նոյեմբերի 26-ի

թիվ 7 արտահերթ նիստի թիվ 21-Ն որոշման

ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վարչական բյուջեի 04-2-4-ի 4639 հոդվածից պակասեցնել 3000,0 հազ դրամ
Պահոստային ֆոնդի 11-1-2-ի 4891 հոդվածին ավելացնել 3000,0 հազ դրամ
Պահոստային ֆոնդի 11-1-2-ի 4891 հոդվածից պակասեցնել 3000,0 հազ դրամ
Համայնքի ֆոնդային բյուջեի 04-2-4-ի 5129 հոդվածին ավելացնել 2750,0 հազ դրամ
04-2-4-ի 5134 հոդվածին ավելացնել 250,0 հազ դրամ

Բյուջեի եկամուտների, ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածներում կատարել փոփոխություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի
Վարդանաշեն համայնք, 1-ին փողոց 26 շենք հեռ. 077 07 00 10

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26»նոյեմբերի 2015թվականի թիվ 22-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով // Տեղական ինքնակառավարման մասին// Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով .

Համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Վարդանաշեն համայնքի վարչական տարածքում 2016թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Ավագանու անդամներ՝

Ավետիսյան	Մայիս
Գևորգյան	Արման
Երիցյան	Գոհարիկ
Զաքարյան	Սայադ

կողմ (4) **դեմ (0)** **ձեռնպահ (0)**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2015թ. նոյեմբերի 26.
Գ. Վարդանաշեն

Հավելված
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի
ԹԻՎ 7 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ N 22 -Ն ՈՐՈՇՄԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինանարարական նախագծին համապատասխան ՝ նոր շենքերի , շինությունների (ներառյալ `ոչ հիմնական)շինարարության (տեղադրման)թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝
հիմնական օբյեկտների համար ՝
1/ մինչև երեք հարյուր քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի ,այդ թվում ՝ այգեգործական (ամառանոցային)տների ,ինչպես նաև մինչև երկու հարյուր քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ
2/ սույն կետի «1-ին » ենթակետով չնախատեսված օբյեկտների համար ՝
ա/ երկու հարյուր մեկից մինչև հինգ հարյուր քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝տաս հազար դրամ
բ/ հինգ հարյուր մեկից մինչև հազար քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տասնհինգ հազար դրամ
գ/ հարյուր մեկ և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար երեսուն հազար դրամ . ոչ հիմնական շինությունների տեղադրման համար ՝
3/ մինչև քսան քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հազար դրամ .
4/ քսան և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ երեք հազար դրամ :
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման , ուժեղացման , վերականգնման , արդիականացման , աշխատանքների (բացառությամբ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով ՝
1/ չի նախատեսվում կցակառույցների , վերակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն ՝ երկու հազար դրամ .
2./ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման , վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների , վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ՝ ստորգետնյա)հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գոռծառական նշանակության փոփոխություն , ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը ՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով .

3/նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն , ապա , սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն , որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը :

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է երկու հազար դրամ

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար ՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար ՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ .
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար ՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար մեկ հազար հինգ հարյուր դրամ :

5. Համայնքի տարածքում ՝

1/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար ՝ երեք հարյուր հիսուն դրամ .

2/ հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ :

6. Համայնքի տարածքում առևտրի , հանրային սննդի , զվարճանքի , շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար ՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1/ առևտրի օբյեկտների համար ՝ քսան հինգ հազար դրամ .

2/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ .

3/ բաղնիքների (սաունաների) համար ՝ երկու հարյուր հազար դրամ .

4/ խաղատների կազմակերպման համար հինգ հարյուր հազար դրամ

5/ շահումով խաղերի կազմակերպման համար ՝երկու հարյուր հիսուն հազար դրամ .

6/ վիճակախաղերի կազմակերպման համար ՝ մեկ հարյուր հազար դրամ :

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ երկու հազար դրամ:

8. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների)ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիք տարվա համար սահմանվում է՝ հինգ հազար դրամ :

9.Համայնքի տարածքում աղբահանության կազմակերպման համար սահմանել տեղական վճար յուրաքանչուր շնչի հաշվով տարեկան մեկ հազար դրամ:

10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար երեք հազար դրամ :

11. Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի հատկացնելու , հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման համար՝ գյուղապետարանի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար հինգ հազար դրամ :

12. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար ՝ մասնակիցներից վճար տաս հազար դրամ :